Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

«Ազգ եւ ժառանգություն»
Համահայկական երիտասարդական գիտաժողով

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
Ստեփանակերտ
սեպտեմբեր 26-30, 2006թ.

ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարություն
ԼՂՀ կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարություն
ՀՀ «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ
ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության պալատ

«Ազգ եւ ժառանգություն»
համահայկական
երիտասարդական
գիտաժողով

Սեպտեմբեր 26-30 2006 թ.
Ստեփանակերտ

Գիտաժողովը նվիրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման 15-ամյակին

Խմբագրական խորհուրդ

Ս. Խանյան -բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ
Վ. Բալայան- պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ա. Մխիթարյան – հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր
Շ. Ասրյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս
Լ. Բեգլարյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Գրքում զետեղված են սեպտեմբերի 26-30-ը տեղի ունեցած Համահայկական երիտասարդական գիտաժողովի զեկուցումները

յան ղեկավարության կողմից կիրառվող մոլորեցնող միջոցներով: Պատճառը ամենևին էլ ժողովրդի սոցիալական դժվար պայմանները չեն, այլ եթերային ցածրորակ պահանջմունքները: Այստեղ սխալ կլինի նաև մեկնաբանել նախապես մշակված գրագետ «փի արտ» տեխնոլոգիաների առկայությունը, քանի որ ամեն ինչ արվում է շատ պարզ եղանակով և այն համոզմունքով, որ «ԱԼՄ»-ի համահայաստանյան հեռուստալսարանը պարզապես մեդիագրագետ չէ:

Մեդիագրագիտության պակասը հատկապես առավել նկատելի է դառնում նախընտրական քարոզարշավի շրջանում, երբ քաղաքացիները լուրջ դժվարության առջև են կանգնում «թացը չորից» տարբերակելու գործում: Այսինքն, ինչպես պնդում են բազմաթիվ արտասահմանյան մեդիատեսաբաններ, քաղաքացիական հասարակություն կառուցելու ճանապարհին անչափ կարևոր է գիտակցել նաև մեդիագրագետ քաղաքացի ունենալու անհրաժեշտությունը: Որպես ամփոփում հնչած մտքերի՝ հարկ է մեկ անգամ ևս նշել օր առաջ մեդիագրագիտության ոլորտին առնչվող համապատասխան ծրագրերի մշակման և կիրառման կարևորությունը հայաստանյան հանրակրթական դպրոցներում և բուհերում: Մեդիագրագիտությունը մեր օրերում օրընթացային պահանջ է և 21-րդ դարի քաղաքացուն այլևս անհնար է պատկերացնել առանց գանգվածային հաղորդակցության ոլորտին առնչվող գիտելիքների իմացության:

Վահան Դիլանյան
«Քաղաքական զարգացումների
հետազոտական կենտրոն»

Հայ հոգեւոր ու նյութական մշակույթի գանձարանը

Հայ ազգը, ինչպես և իր մշակույթը առանձնահատուկ է սեփական էությամբ: Ցանկացած մշակույթ իր նյութական և հոգևոր տեսակներով տվյալ ազգի կերպարի արտացոլանքն է. այն իր մեջ ամփոփում է տվյալ հանրույթի՝ պատմական հոլովույթներում ձևավորված վարքաբանական. պատմահոգեբանական. ֆիզիկակենսաբանական արժեքները:

Հայ ազգի մշակույթի գանձարանն իր կառուցվածքով «աչքի պես բարդ է և պարզ»: Այն ձևավորվել ու զարգացել է մեծամասամբ Այլքի տիրապետության ներքո կամ հայ եզերքից դուրս: Այս հանգամանքը ոչ միայն ձևավորել է հոգեբանական ազատագրության ձևաչափային գիտակցություն – հոգեբանությունը, որն, ըստ երևույթին, նպաստել է

ստեղծագործելու - արարելու միտում – ունակությանը, նաև ձևախախտել է պարզ կամ միակաղապար մշակույթի լինելիությունը՝ Այլքի տիրապետության ներքո՝ սեփական արժեքային համակարգ՝ օտարածին արժեքների զուգորդման ու ինտեգրացման առումով, հայ եզերքից դուրս՝ սեփական բնական-գենետիկական դաշտից դուրս լինելու առումով, երբ կտրված է հոգեկենսաբանական կապը «հայրենիք - բնատարածքից»: Սրանք այն կարևոր գործոններն են, որոնք ազդել են կամ իրենց խոր կնիքն են թողել «Հայ գանձարանի» էության ու կառուցվածքի վրա:

Բայց պետք է նշել, որ չնայած այդօրինակ առանձնահատուկ դժվարություններին, հայ նյութական և հոգևոր մշակույթը զարգացել է հայկականի հիմքի վրա. ուշագրավ է Վ. Սարոյանի՝ այս պարագայում որպես հայ մշակույթի կերտողի, հետևյալ խոսքերը՝ «..միջավայրը, որի մասին գրում եմ՝ ամերիկյան է, լեզուն, որով գրում եմ՝ անգլերենն է, բայց ոգին, որ ինձ մղում է գրելու՝ հայկական է»:
«Հայ գանձարանի» էութենական ու կառուցվածքային բնութագրիչ գծերը բնորոշվում են փոխկապակցվածությամբ ու նույնականությամբ: Այս առումով, նշենք, որ Հայ մշակույթը զարգացել է ելևէջներով՝ կախված Այլքի տիրապետության ճնշման աստիճանից ու Այլ եզերքում արարելու-ստեղծագործելու չափից. սրանց չափիչն, ըստ երևույթին, պատմական ժամանակաշրջանն է:

Հայ մշակույթի համակարգի վրա իր ազդեցությունն է թողել վերոնշյալ երկու գործոնների, այսպես ասած, ենթագործոնը, այն է՝ հայ ժողովուրդը գտնվել է երկատված վիճակում, և հայ մշակույթի՝ որպես բիոլոգիական ամբողջության հոգեբանական համակարգը ադեկվատ (նույնական) կերպով երկատված է եղել, իսկ մշակույթի դիախրոնիկ ամբողջությունը ձևախախտված է: Եվ չնայած միավորվելու հոգեբանական միտումին, որն, ըստ երևույթին ուղեկցվել է սթրեսային - ֆրուստրացիոն դրսևորմամբ, այնուամենայնիվ այդ Միտումը եղել է հայապահպանության բարոյահոգեբանական պարամետրի հիմնաքարը. այն ենթագիտակցական կերպով է իրացվել՝ որպես Մշակույթի երկու մասերի միավորման երաշխիք:

Ահա այս արժեքն է, որ լրացնում է Հայ մշակույթի գանձարանը: Ենթագործոն-արժեք տիպին է դասվում և հայկականի՝ որպես տիեզերական մշակույթի միկրոկոսմ լինելիությունը: Հայկական մշակույթը՝ որպես Համաշխարհային Արժեքային Բանկի (ՀԱԲ) «ականավոր անդամ», որպես այդպիսին հանդես է եկել պատմական բոլոր ժամանակներում: Դրա ակտիվությունն այնքան բարձր է, որ

կարելի է խոսել անգամ հայկական համաշխարհայնացման և կամ աշխարհակարգի հայկական մոդելով կերտման հնարավորության մասին, իսկ փիլիսոփայական - ազգայնական առումով՝ և հայկական մեսսիականության մասին:

Սկսյալ հայկական Քարահունջից՝ իբրև տիեզերքի երկրային կենտրոն, շղթայելով Նարեկյան հանդուգն Մատեանը, որը բացահայտեց ու արդարացրեց Մարդու աստվածային կատարելացման հնարավորությունը, անկրկնելի ասեղնագործ խաչքարերը, հայկական ավարայրները՝ որպես քաղաքական-հայրենասիրական-ռազմական մշակույթի յուրատեսակ արժեքներ, հայ մշակույթը մշտապես հարստացել է ու զարգացել՝ նորանոր ձևերով ընդլայնելով սեփական որակի ծավալները:

Ու կարծես կոլեկտիվ անգիտակցականի վերարժեքավորման մեխանիզմով գիտակցել է իր «ես»-ի՝ որպես «Համաշխարհային Մենք»-ի բաղկացուցչի անհրաժեշտության գաղափարը, այդպիսով անընդհատ լցվել ու ծավալվել է Համաշխարհային մշակույթի օվկիանոսում:

Վերը նշված մշակույթի առանձնահատուկ հայկական լինելն ու դրա հետ մեկտեղ այդքան առանձնահատուկ սեփականի «դուրսգրումը» Համաշխարհային համակարգ, այն վեհ արժեքներից են, որոնք լցնում են «հայոց գանձարանը»:

Ստիպողաբար կամ կամավորապես մշտապես լինելով Համաշխարհայինի և կամ Այլքի հետ մերման հարաբերություններում, հայկական մշակույթն այդպիսով ոչ թե ժխտել է Ուրիշին կամ ինքնաբայքայվել, այլ հաստատակամորեն ապահովել է «տեսակային զուգորդման» սկզբունքը, հետևաբար՝ և «տեսակային բազմազանության» բնաբանական օրենքը. այսժամ, ըստ Հայկականի, «Տեսակն իրավունք չունի ոչնչացնելու Տեսակին. աշխարհը դրանով աղքատանում է»:

Այդ սկզբունքը, որը նաև մարմնավորում է համակեցության նորմերի (modus vivendi) արդիականացման գաղափարը, և որի բացակայությունը հանդիսանում է մարդկության ութ մահաբեր մեղքերից մեկը, կոչված է լցնելու Հայ մշակույթի գանձարանը:

Իսկ վերոգրյալի ամփոփման համատեքստում կամա թե ակամա երևան է գալիս մի «հրաշք» արժեք ևս. հայկական մշակույթը մարդասիրական մշակույթ է:

Այստեղ նկատի չունենք ոչ հայկական քրիստոնեական բարոյաբանությունը և ոչ էլ մարդակենտրոնության անհատապաշտական իմացաբանությունը: Հայկական մշակույթը կոչված է Մարդու՝

որպես բանական ու զգացմունքային էակի բացահայտմանը և Նրա սկզբունքի գերակայության ապահովմանը:

Եվ հենց «մշակույթ» հասկացությունը ոճաբանական - փիլիսոփայական տեսանկյունից, ասես, համատեքստում է «Մարդու սկզբունքը» այնքանով, որ Մշակույթն արարում է Մարդը: Մարդը Մշակույթն արարարում է Մարդու համար:

Սիա այս բանաձևն է, որ ընկած է հայ նյութական և հոգևոր մշակույթի համակարգի հիմքում և որը, (նեղ առումով՝ գեղագիտական, լայն առումով՝ բարոյագիտական), արժեք դարձած ձևավորում է ողջ հայ մշակույթի գանձարանը:

Ակնհայտ է, որ հայ մշակույթի վերոհիշյալ բոլոր արժեքներն, իսկապես յուրատեսակ են: Դրանք փոխկապակցված բնույթ ունեն: Սա վկայում է ինչպես մշակույթի համակարգի կայացածության, այնպես էլ պատճառակցական մեխանիզմով Նրա հաջորդիվ զարգացման երաշխավորման մասին:

Ուստիև, ընկալելով պատմականության զգացումը և ապահովելով գենոկենսաբանական արժեքային գործընթացների նորմալ գործառնությունը, պետք է հստակ գիտակցենք հայ մշակույթի զարգացման կարևորությունը, և այն գիտակցենք ոչ միայն մեր «ես» -ի համար, այլ նաև համաշխարհային մշակույթի ու Մարդու համար:

Սյուզաննա Գրիգորյան
ԱրՊՀ

Սասունցիների կանչը
(Մ. Գալշոյանի «Մարութա սարի ամպերը» պատմվածաշարը)

Հայ ժողովուրդը դարերի ընթացքում ստիպված է եղել թողնել խաղաղ-ստեղծարար աշխատանքը, դիմել զենքի փրկելու իր հող հայրենին, իր ազատությունն ու հոգևոր ու նյութական գանձերը: Անթիվ կորուստների գնով նրան հաջողվել է հասնել 21-րդ դարի շեմին և շարունակել հարատևման իր գրույցը քաղաքակիրթ աշխարհի հետ: Սակայն, ավաղ, դաժան է եղել պատմությունը նրա հանդեպ, ծանր նրա ճակատագիրը, քանզի ունեցել է չարամիտ հարևաններ, որոնց դեմ մաքառել են Հայկ Նահապետից սկսած մինչև մեր օրերի քաջազուն հայորդիները: Բաբելացի Բելի դեմ մղված պայքարը շարունակվել է բյուզանդական և պարսկական բռնապետությունների, ապա թաթարմոնղոլների և սելջուկյան գորշ գայլերի դեմ: Անցել են դարերը, քաղաքակրթությունը կարծես թե փոխել է ժողովուրդներին, սակայն մեր

Ֆորմատ 84x60/8, ծավալը՝ 10.5 տպագրական մամուլ,
տպաքանակը՝ 300, թուղթ՝ օֆսեթ:
Տպագրությունը՝ «ՊՈԼԻԳՐԱՖ» ՓԲԸ
Ստեփանակերտ, Վ.Մամիկոնյանի փող., 21,
հեռ 4-89-96, 4-89-97, 4-89-98,

ПОЛИГРАФ